ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/56-3

ք. Երևան

«29» նոյեմբեր 2022թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Կ. Սարգսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և ՀՀ քաղաքացի Հայկ Հարությունյանը (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայողների մասնագիտական վերապատրաստման եռօրյա դասընթացների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 132351 (մեկ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ քաղաքացի Հայկ Հարությունյան
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Էջմիածին, Զարենցի փ., 3 շ., 15 բն.
ՀՎՀՀ՝ 02629081	ն/ք՝ 004332607, տրվ.՝ 02.10.2014թ.,057-ի կողմից
Հ/Հ՝ 900011018539	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ՝ 2470049536310030
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝	
---------- Կ. Սարգսյան	---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

29

Հավելված N 1
նոյեմբերի 2022թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/56-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	քանակը		մատուցման
						հասցեն	ժամկետը
3	80521100/23	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ **1.Վերապատրաստման դասընթացի կազմակերպումն առկա՝** աշխատանքային օրերին, ընդհանուր 1080 րոպե տևողությամբ՝ ապահովելով վերապատրաստման դասընթացների անցկացումը վերապատրաստման մասնակիցներին մատչելի/հասանելի միջոցների կիրառմամբ: Դասընթացի անցկացումը պետք է իրականացվի վերապատրաստողի տարածքում, Երևան քաղաքի վարչական սահմաններում: **2.Վերապատրաստում իրականացնող մասնագետը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական չափանիշներին՝** 1) կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 2) հանրային ծառայության ոլորտում կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 3) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմայով կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու և (կամ) միջազգային ծրագրերին մասնակցության առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 4) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմային առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն: Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն 20 օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման ժամկետների մասին: **3.Պատվիրատուն** պետք է ապահովի սահմանված թվով քաղաքացիական ծառայողների մասնակցությունը վերապատրաստման գործընթացին: Վերապատրաստման յուրաքանչյուր փուլի ավարտին մասնակիցների կողմից ծրագրերի յուրացման մակարդակի ստուգման նպատակով	դրամ	88234	1	ՀՀ, ք.Երևան Մելիք-Ադամյան 1	Ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրը կնքելուց հետո՝ կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրվանից սկսած (բացառությամբ երբ Կատարողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետներում) մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

		պետք է անցկացվի թեստավորում: Թեստերը կազմվելու են վերապատրաստողի կողմից և պետք է բաղկացած լինեն առնվազն 20 առաջադրանքից: Թեստավորման արդյունքները /ըստ տոկոսի/ պետք է տրամադրվեն պատվիրատուին: ***<u>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</u>*** **Իրավական ակտերի մշակման առանձնահատկություններ.** 1) Իրավաստեղծ գործունեության սկզբունքներն ու հիմնական տարրերը: Իրավական ակտը. • Ներածություն: • Իրավաստեղծ գործունեության հասկացությունը և սկզբունքները: • Իրավաստեղծ գործունեության իրավական հիմքերը, տեսակները, փուլերը: • Իրավական ակտերի հասկացությունը, դրանց տեսակները և համակարգը: • Իրավական ակտերի նախագծերի մշակման իրավական ընթացակարգը և մեթոդաբանությունը: • Ամփոփում, հարց ու պատասխան: 2) Իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը և պետական գրանցումը, իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոնները. • Ներածություն: • Իրավական ակտերի փորձաքննության և պետական գրանցման կարգը: • Օրենսդրական ակտերի նախագծերի պետական իրավական փորձաքննության առանձնահատկությունները: • Իրավական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջները: • Իրավական ակտի լեզուն, վավերապայմանները, կառուցվածքը, իրավական ակտերի մասերը: • Իրավական ակտի տեքստի ընդունման օրը, իրավական ակտի անվանման հիշատակումը և վերնագիրը, իրավաբանական հասկացությունների, տերմինների և հղումների կիրառումը: • Իրավաբանական տեխնիկայի մյուս կանոնները: • Ամփոփում, հարց ու պատասխան: 3) Իրավական ակտերի հրապարակումն ու ուժի մեջ մտնելը, իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելը, դրանց գործողությունը դադարեցնելը, գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և անձանց շրջանակներում. • Ներածություն: • Իրավական ակտերի հրապարակումը և ուժի մեջ մտնելը:					

		• Հրապարակման ոչ ենթակա իրավական ակտերը, անհատական և ներքին իրավական ակտերի ուժի մեջ մտնելը: • Իրավական ակտերի պաշտոնական և ոչ պաշտոնական հրապարակման եղանակներն ու կարգը, իրավական ակտերի պահանջների կատարումն ու իրազեկումը: • Նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետի որոշումը: • Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կանոնները, իրավական ակտերի գործողության ժամկետը և գործողությունը ժամանակի ընթացքում ու տարածության մեջ: • Ամփոփում, հարց ու պատասխան: 4) Իրավական ակտերի մեկնաբանումը և պարզաբանումը. • Ներածություն: • Իրավունքի նորմերի մեկնաբանման հասկացությունը, անհրաժեշտությունը և նշանակությունը: • Իրավունքի նորմերի մեկնաբանման երկու առումները: • Իրավունքի նորմերի իմաստի մեկնաբանման եղանակները և հետևանքները: • Իրավական ակտերի պարզաբանումը և դրա պաշտոնական ընթացակարգը: • Ամփոփում, հարց ու պատասխան: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը՝ 10:					
5	80521100/25	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ **1.Վերապատրաստման դասընթացի կազմակերպումն առկա՝** աշխատանքային օրերին, ընդհանուր 540 րոպե տևողությամբ՝ ապահովելով վերապատրաստման դասընթացների անցկացումը վերապատրաստման մասնակիցներին մատչելի/հասանելի միջոցների կիրառմամբ: Դասընթացի անցկացումը պետք է իրականացվի վերապատրաստողի տարածքում, Երևան քաղաքի վարչական սահմաններում: **2.Վերապատրաստում իրականացնող մասնագետը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական չափանիշներին՝** 1) կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 2) հանրային ծառայության ոլորտում կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 3) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմայով կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու և (կամ) միջազգային ծրագրերին	դրամ	44117	1	ՀՀ, ք.Երևան Մելիք-Ադամյան 1	Ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրը կնքելուց հետո՝ կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրվանից սկսած (բացառությամբ երբ Կատարողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետներում) մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

		մասնակցության առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 4) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմային առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն: Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն 20 օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման ժամկետների մասին: **3.Պատվիրատուն** պետք է ապահովի սահմանված թվով քաղաքացիական ծառայողների մասնակցությունը վերապատրաստման գործընթացին: Վերապատրաստման յուրաքանչյուր փուլի ավարտին մասնակիցների կողմից ծրագրերի յուրացման մակարդակի ստուգման նպատակով պետք է անցկացվի թեստավորում: Թեստերը կազմվելու են վերապատրաստողի կողմից և պետք է բաղկացած լինեն առնվազն 20 առաջադրանքից: Թեստավորման արդյունքները /ըստ տոկոսի/ պետք է տրամադրվեն պատվիրատուին: ***<u>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</u>*** **ՀՀ Սահմանադրություն.** 1) Սահմանադրական կարգի հիմունքները - 1: • Ներածություն: • Սահմանադրական կարգի հասկացությունը: • Հայկական պետության սահմանադրական բնութագիրը: • Պետական իշխանության կազմակերպման հիմունքները: • Տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրական հիմունքները: • Ամփոփում, հարց ու պատասխան: 2) ՀՀ պետական իշխանության մարմինները. • Ներածություն: • Պետական մարմնի հասկացությունը, տեսակները և գործունեության սահմանադրաիրավական առանձնահատկությունները: • ՀՀ նախագահը և ՀՀ Ազգային ժողովը: • ՀՀ Կառավարությունը, դատական իշխանության և դատախազության սահմանադրական հիմունքները: • Սահմանադրական արդարադատությունը Հայաստանում, տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմունքները: • Ամփոփում, հարց ու պատասխան: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը՝ 20:					

* Մասնագետը պետք է համապատասխանի ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական

- ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝

---------- Ա.Սարգսյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ քաղաքացի Հայկ Հարությունյան
ՀՀ, ք. Էջմիածին, Չարենցի փ., 3 շ., 15 բն.
ն/ք՝ 004332607, տրվ.՝ 02.10.2014թ.,057-ի կողմից
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470049536310030

---------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2

29 նոյեմբերի 2022թ. կնքված

«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/56-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	80521100/23	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ												88234	88234
5	80521100/25	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ												4117	4117

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1

ՀՎՀՀ՝ 02629081

Հ/Հ՝ 900011018539

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար

---------------------------------- Վ. Սարգսյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ քաղաքացի Հայկ Հարությունյան

ՀՀ, ք. Էջմիածին, Չարենցի փ., 3 շ., 15 բն.

Ն/ք՝ 004332607, տրվ.՝ 02.10.2014թ.,057-ի կողմից

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470049536310030

---------------------------------- Հ. Հարությունյան

/ստորագրություն/ Կ.Տ

29

Հավելված 3
նոյեմբերի 2022թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/56-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ---------- 2020թ. դուրս գրված N ---------- հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

29

Հավելված 3.1
նոյեմբերի 2022թ. կնքված
«ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/56-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն